ZCMC
ZANGEZUR PRESERVING VALUES

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան 3309, Լեռնագործների 18

Հեռ.՝ +374 285 33131
Էլ. փոստ՝ info@zcmc.am

Աճուրդին մասնակցելու հրավեր

Հարգելի պարոնայք,

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն հրավիրում է Ձեզ մասնակցելու սև մետաղի ջարդոնի վաճառքի **բաց աճուրդին**, որը տեղի կունենա **2025 թվականի սեպտեմբերի 5-ին, Երևանի ժամանակով ժամը 15:00-ին,** հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյանի փ. 2, 9-րդ հարկ, «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի գրասենյակի բանակցությունների սենյակ

Աճուրդի առարկան՝

Լոտ N 1. Վագոնետներ/Էլեկտրաքարշեր՝1500 տ., մեկնարկային գինը՝ 57 000 դրամ/տ, առանց ԱԱՀ
Լոտ N 2. Ֆլոտացման մեքենաներ՝ 80 տոննա, մեկնարկային գինը՝ 52 000 դրամ/տ, առանց ԱԱՀ

Լոտ N 3. Մետաղական ֆերմաներ / հենասյուներ՝ 250 տոննա, մեկնարկային գինը՝ 60 000 դրամ/տ, առանց ԱԱՀ

Լոտ N 4. Ֆլոտացման բլոկներ ՓՊՄ՝ 65 տոննա, մեկնարկային գինը՝ 55 000 դրամ/տ, առանց ԱԱՀ

Լոտ N 5. Այլումինի ջարդոն՝ 2 տոննա, մեկնարկային գինը՝ 570 000 դրամ/տ, առանց ԱԱՀ:

Աճուրդի ձևաչափը՝ բաց

Մասնակիցների գրանցում.

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել մինչև **2025 թվականի սեպտեմբերի 4-ը:** Գրանցման համար խնդրում ենք robert.davtyan@zcmc.am էլեկտրոնային հասցեին ուղարկել հետևյալ փաստաթղթերը.

1. Աճուրդին մասնակցության հայտ՝ ընկերության պաշտոնական ձևաթղթի վրա, նշելով կազմակերպության անվանումը և կոնտակտային տվյալները,

2. Լիազորված ներկայացուցչի անձնագրային տվյալները և ԱԱՀ,

3. Աճուրդի բոլոր պայմանների հետ համաձայնության հակիրճ հաստատում:

Փաստաթղթերն ուղարկվում են էլեկտրոնային եղանակով: Հստակեցումների անհրաժեշտության դեպքում դիմել հետևյալ հեռախոսահամարով՝ +374 94 702 080:

Կարևոր տեղեկատվություն

1. **Աճուրդի քայլը թիվ 1, 2, 3 և 4 լոտերի** համար կազմում է **1000 դրամ, թիվ 5 լոտի** համար՝ **5000 դրամ**: Աճուրդի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, **ով երրորդ քայլի արդյունքներով առաջարկել է ամենաբարձր գինը,** եթե վերջին գնային առաջարկը երեք անգամ հայտարարելուց հետո ոչ մի մասնակից չհայտնի գինը բարձրացնելու մտադրություն:

2. Ջարդոնն իրացվում է Վաճառողի տարածքից (ք. Քաջարան, ք. Կապան) **ինքնուրույն դուրս բերման** պայմանով: Ջարդոնի **բեռնումը և** անհրաժեշտ չափերով **կտրումն** իրականացվում է Գնորդի հաշվին: Գնորդին տրվում է առավելագույնը **90 օրացուցային օր**՝ պայմանագրի ստորագրման պահից ամբողջ լոտը դուրս բերելու/առաքելու համար:

3. **Վճարման պայմանները**. ջարդոնի առաքումն իրականացվում է Գնորդի կողմից **10 000 000 դրամի չափով կանխավճարի** փոխանցումից հետո, բացառությամբ Լոտ N5-ի (վճարվում է փաստացի քաշը ստանալուց անմիջապես հետո): Այդ գումարի չափով բեռնառաքումից հետո Գնորդը փոխանցում է հաջորդ նույնքան կանխավճարը և այլն, մինչև ամբողջ լոտի լրիվ վճարումը:

4. Աճուրդը չի կայանա, եթե դրա անցկացման պահին գրանցված լինի ընդամենը մեկ մասնակից:

5. Աճուրդին մասնակցությունը նշանակում է դրա բոլոր պայմաններին լիակատար համաձայնություն:

Սպասում ենք Ձեր մասնակցությանը:

Հարգանքով՝ «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն

Աճուրդային հանձնաժողովի նախագահ Սինյակով Ա.Ա.